# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2

ք. **Երևան** «07» Հոկտեմբեր 2022թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տարոն-ԳԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Գևորգյանի -ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **աշխատանքների** պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի ***առավելագույն*** գինը կազմում է ***8 754 000 (ութ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար)*** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**[25]

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀոստիկանություն<br>ք. Երևան, Նալբանդյան 130<br>ՀՀ Ֆինանսների նախարարության<br>Աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011021947<br>ՀՎՀՀ 01533334<br>հեռ. 59-68-57<br>policetv.gnumner@mail.ru | «Տարոն-ԳԳ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,<br>գ. Ն. Բազմաբերդ 15փ, 6շ<br>Հեռ.՝ 093-640-448<br>էլ. փոստ՝ taron.Baghramyan77@mail.ru<br>ԱկբաԿրեդիտԱգրիկոլ Բանկ<br>Հ/հ՝ 220173331251000<br>ՀՎՀՀ 05028219 |
| _____ Վ. Մովսիսյան<br>/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | Տնօրեն՝<br>_____ Գ. Գևորգյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 07 » Հոկտեմբեր2022թ. կնքված*
*ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 3 | 45461100/570 | Արագածոտնի մարզում գործող ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՈԲ վարչական շենքի 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ<br>- Աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվող նյութերը և ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:<br>- Կատարված աշխատանքները պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ:<br>- Երաշխիքային ժամկետի ընթացքում կատարված աշխատանքներում եթե ի հայտ են եկել թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում | դրամ | 8 754 000 | 1 | Արագածոտնի մարզ | ՍԿԻԶԲ Համաձանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր հետո, 60 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2022 թվականի դեկտեմբերի 20 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերացնել թերությունները: Կատարման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում կկիռարվի պայմանագրով նախատեսված դրույթները:<br>- Աշխատանքների բովանդակությունը տես հավելված 1 - ում: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**հեռ. 59-68-57**
**Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru**

**Վ. Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Տարոն-ԳԳ» ՍՊԸ**
**Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,**
**գ. Ն. Բազմաբերդ 15փ, 6շ**
**Հեռ.՝ 093-640-448**
**էլ. փոստ՝ taron.Baghramyan77@mail.ru**
**ԱկբաԿրեդիտԱգրիկոլ Բանկ**
**Հ/հ՝ 220173331251000**
**ՀՎՀՀ 05028219**

**Տնօրեն՝**

**Գ. Գևորգյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

# Արագածոտնի մարզում գործող ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՈԲ վարչական շենքի 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ կատարման վերաբերյալ

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հավելված N 1

| NN | Հիմնավորում | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը | 1 միավորի ընդհանուր արժեքը /հազ.դր/ | ընդհանուր արժեքը /հազ.դր/ | Կշիռը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | |
| 5 | C310-13 տ.մ.կ 29 | Շին աղբի բարձում ա/մեքենա ձեռքով և տեղափոխում 13կմ | տ | 4.5 | 2.753 | 12.390 | |
| | | | | | 0.000 | 12.390 | 0.17 |
| | | ***ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*** | | | | | |
| | | ***Հատակներ*** | | | 0.000 | | |
| 1 | Վ23-160 | Բետոնե հատակի քանդում | մ3 | 2.3 | 0.918 | 2.111 | |
| 5 | Վ23-171 | Լինոլիումե հատակի քանդում | մ2 | 59.08 | 0.459 | 27.112 | |
| 9 | Վ23-166 | Խեցեսալե հատակների քանդում | մ2 | 7.68 | 1.836 | 14.097 | |
| | | | | | 0.000 | 43.320 | 0.59 |
| | | ***Պատեր*** | | | 0.000 | | |
| 11 | Վ13-5 | Պատերի կերամիկական սալերի քանդում | մ$^2$ | 45 | 0.918 | 41.301 | |
| 13 | Վ11-223 | Պատերի գաջե սվաղի քանդում | մ$^2$ | 239 | 1.285 | 307.094 | |
| 16 | Վ23-181a | Պատերի երեսապատման բազալտե սալերի քանդում | մ$^2$ | 38.28 | 0.918 | 35.133 | |
| 19 | Վ3-18 | Միջնորմային պատերի քանդում | մ$^3$ | 4.2 | 9.178 | 38.547 | |
| | | | | | 0.000 | 422.075 | 5.79 |
| | | ***Դռներ և պատուհաններ*** | | | 0.000 | | |
| 20 | E46-124 | Փայտե դռների քանդում | մ$^2$ | 13.2 | 0.918 | 12.115 | |
| 23 | 9-105 q=0,5 | Ալյումինե դռների քանդում | մ$^2$ | 3.9 | 3.671 | 14.318 | |
| | | | | | 0.000 | 26.432 | 0.36 |
| | | ***Առաստաղներ*** | | | 0.000 | | |
| 32 | E46-94 | Կախովի պլաստմասե առաստաղի քանդում | մ$^2$ | 3.84 | 0.551 | 2.115 | |
| | | | | | 0.000 | 2.115 | 0.03 |
| | | ***Տանիք*** | | | 0.000 | | |
| 37 | Վ8-186 | Տանիքի ջրթափ խողովակների ապամոնտաժում | մ | 24 | 0.551 | 13.216 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 0.000 | 13.216 | 0.18 |
| | | ***Տանիքի վերանորոգման աշխատանքներ*** | | | 0.000 | | |
| 9 | 12-278 | Ջրհոս խողովակների տեղադրում ցինկապատ հարթ թիթեղից փ100մմ | գմ | 24 | 2.294 | 55.068 | |
| 11 | Վ8-189 | Ջրահեռացման ձագարների մոնտաժում, ներառյալ ձևավոր մասերը | կ-տ | 4 | 18.356 | 73.423 | |
| | | | | | 0.000 | 128.491 | 1.76 |
| | | ***Վերանորոգման աշխատանքներ*** | | | 0.000 | | |
| 2 | Ե8-140 | Միջնորմների իրականացում 20սմ հաստության պեմզաբլոկներով | մ3 | 2.17 | 22.945 | 49.790 | |
| 3 | Օգս.59 | Միջնորմների շարվածքի ամրանավորում | տ | 0.036 | 458.897 | 16.520 | |
| | | | | | 0.000 | 66.311 | 0.91 |
| | | ***Պատեր*** | | | 0.000 | | |
| 5 | Ե15-246-1 | Պատերի լավորակ գաջե սվաղ | մ² | 330 | 1.377 | 454.308 | |
| 8 | Ե15-256 | Պատերի լավորակ ց/ավազե սվաղ | մ² | 23.5 | 2.753 | 64.704 | |
| 10 | Ե15-660 | Պատերի և շեպերի ծեփամածկում գիպսային և կավճային մածիկով և ներկում լավորակ լատեքսային ներկով | մ² | 330 | 1.377 | 454.308 | |
| 11 | 10-155 կիրառ | Ալյումինե պրոֆիլներ սվաղի անկյունային եզրերի համար | գմ | 45 | 1.101 | 49.561 | |
| | | | | | 0.000 | 1022.880 | 14.02 |
| | | ***Առաստաղներ*** | | | 0.000 | | |
| 18 | Ե34-316 34-340 q=0,5 | Կախովի պլաստմասե առաստաղի իրականացում ցինկապատ պրոֆիլների վրա | մ² | 7.68 | 22.945 | 176.216 | |
| 19 | Ե34-322 q=0,5 | Կախովի /արմստրոնգ/ առաստաղի պատրաստում 60x60սմ բջիջներով մետաղական ցինկապատ կարկասով | մ² | 112.2 | 4.589 | 514.882 | |
| | | | | | 0.000 | 691.098 | 9.47 |
| | | ***Հատակներ*** | | | 0.000 | | |
| 23 | Ե11-55 Ե11-56 q=2 | Հատակների ցեմենտե-ավազե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստ. | մ² | 106.6 | 2.294 | 244.500 | |
| | Ե11-219 | Մամլոգրանիտե /պրեսգրանիտ/ հատակների իրականացում 600x600մմ չափերի | մ² | 86.5 | 4.130 | 357.251 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | E11-135 | Խեցեսալե հատակների պատրաստում սոսնձաշերտի վրա /սանհանգույց/ ոչ պակաս 8մմ հաստ | մ² | 7.68 | 9.178 | 70.487 | |
| 29 | E11-191 | Լամինատե հատակների իրականացում հաստ. 8մմ ներառյալ սպունգը և շրիշակը | մ² | 25.73 | 7.342 | 188.919 | |
| 31 | E10-155 կիրարկում | Դռան շեմում տեղադրվող հատակի մետաղական սահմանազատիչ | գմ | 2.7 | 1.836 | 4.956 | |
| 47 | Վ5-43 | Պլաստիկե շրիշակների տեղադրում h=7սմ | գմ | 35.2 | 4.589 | 161.532 | |
| 48 | 15-430 | Մամլոգրանիտե/պրեսգրանիտ/ շրիշակների C483 տեղադրում h=10սմ | գմ | 41.9 | 4.589 | 192.278 | |
| | | | | | 0.000 | 1219.921 | 16.72 |
| | | ***ԲԱՑՎԱԾՔՆԵՐ ԴՌՆԵՐԻ ԵՎ ՎԻՏՐԱԺՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ*** | | | 0.000 | | |
| 2 | Ինֆ.տեղեկ. | Ալյումինե խուլ դռների տեղադրում | մ² | 3.78 | 73.423 | 277.541 | |
| 3 | Ինֆ.տեղեկ. | Ալյումինե ապակեպատ դռների տեղադրում | մ² | 9.45 | 59.657 | 563.754 | |
| 6 | Ինֆ.տեղեկ. | Արտաքին մետաղական երեսապատված դռան տեղադրում | մ² | 3.9 | 18.356 | 71.588 | |
| 8 | Շուկա | Արտաքին դռան փականի տեղադրում | հատ | 1 | 13.767 | 13.767 | |
| 9 | Շուկա | Մետաղական դռան փականի տեղադրում | հատ | 1 | 18.356 | 18.356 | |
| 10 | 14-398 | Մետաղական դռան երկտակ յուղաներկում | մ² | 3.9 | 1.836 | 7.159 | |
| 15 | Ինֆ. Տեղեկագիր | Մ/պլ միափեղկ խուլ դռան տեղադրում սպիտակ | մ² | 3.78 | 36.712 | 138.770 | |
| 24 | 13-144 | Դռան մեխանիկական փակիչի տեղադրում/աբեյաբ/ | հատ | 2 | 27.534 | 55.068 | |
| | | | | | 0.000 | 1146.002 | 15.71 |
| | | ***ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ*** | | | 0.000 | | |
| 1 | Ինֆ. Տեղեկագիր | Երկփեղկ պատուհան՝ սպիտակ մետալոպլաստե պրոֆիլներից /60մմ/, չբացվող, /արտերկիր/ | մ² | 6.52 | 36.712 | 239.360 | |
| 2 | Ինֆ. Տեղեկագիր | Երկփեղկ պատուհան՝ սպիտակ մետալոպլաստե պրոֆիլներից /60մմ/, բացվող, /արտերկիր/ | մ² | 6.52 | 56.903 | 371.009 | |
| 13 | 10-102 կիրարկ | Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 35սմ լայնության | մ² | 9.4 | 2.753 | 25.882 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | E10-155 կիրառ | Շեպերի և անկյուններում անկյունակի տեղադրում 15x15 | գմ | 34 | 0.918 | 31.205 | |
| 17 | 9-34 q=1,5 | Մետաղական ճաղավանդակի տեղադրում ուղղանկյունաձև խողովակից, պատրաստումով | մ² | 74.5 | 4.589 | 341.878 | |
| 18 | Ինֆ. Տեղեկագիր | ՈՒղղանկյու խողովակի արժեքը 40x20x2մմ | գմ | 160 | 0.918 | 146.847 | |
| | | | | | 0.000 | 1156.181 | 15.85 |
| | | ***Հովիար*** | | | 0.000 | | |
| 1 | 9-34 պայմ | Հովիարի իրականացում ուղղանկյուն խողովակներից | մ² | 7.8 | 5.048 | 39.373 | |
| 2 | Ինֆ. Տեղեկագիր | Ուղղանկյուն խողովակ 50x25x3մմ | մ | 64 | 1.836 | 117.478 | |
| | | | | | 0.000 | 156.851 | 2.15 |
| | | ***Արտաքին նորոգման աշխատանքներ*** | | | 0.000 | | |
| 4 | 34-393 | Շենքի արտաքին ճակատի երեսապատում ALUKOBOND -ով/Ֆիբրոցեմենտ/ 4մմ հաստությամբ, մետաղական կարկասի վրա | մ² | 13.4 | 16.520 | 221.372 | |
| 7 | 13-149 | Արտաքին աստիճանների , թեքահանթակի և հարթակի, բետոնե պատնեշի երեսապատում բազալտե 3սմ հաստությամբ սալերով | մ² | 2.5 | 9.178 | 22.945 | |
| | | | | | 0.000 | 244.317 | 3.35 |
| | | ***ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ*** | | | 0.000 | | |
| 3 | E20-744 | Տանիքային անաղմուկ օդամուղ L=100մ3/ժ, H=150Պա, N=0,04կվտ./VENTS/, կամ համարժեք | հատ | 2 | 18.815 | 37.630 | |
| | | | | | 0.000 | 37.630 | 0.52 |
| | | ***ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ*** | | | 0.000 | | |
| 8 | E16-135 | Փական d20 | հատ | 5 | 3.671 | 18.356 | |
| 11 | E16-261 | Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ սառը ջրի համար 10,0 մթն. ՃՆշ Փ20մմ | գմ | 20 | 1.147 | 22.945 | |
| 13 | Ինֆ. տեղեկագիր | Պոլիպրոպիլենե ֆիտիգներ | հատ | 9 | 0.918 | 8.260 | |
| 17 | E69-69 | Կերամիկական լվացարանի ապամոնտաժում | հատ | 1 | 4.589 | 4.589 | |
| 18 | E69-80 | Զուգարանակոնքի ապամոնտաժում | հատ | 1 | 4.589 | 4.589 | |
| 21 | E69-1-B q=0,1 | Պողպատյա ջրատար խողովակի ապամոնտաժում Փ15 ÷ 40 | գմ | 10 | 0.459 | 4.589 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | 19-53-Բ | Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Ø100-50 | գմ | 6 | 0.918 | 5.507 | |
| 23 | Е17-72 | Արտաքնոցի թասի լվացման տակառիկի մոնտաժում | հատ | 1 | 9.178 | 9.178 | |
| 24 | Е17-53 | Լվացարանի ջրընդունիչ-ծորակ խառնիչ | հատ | 2 | 6.425 | 12.849 | |
| 27 | 17-73 | Զուգարանակոնքի տեղադրում , թեք թողարկով, լվացման տակառիկով | հատ | 1 | 36.712 | 36.712 | |
| 29 | 17-36 | Հոսակի տեղադրում Φ50 | հատ | 2 | 0.918 | 1.836 | |
| 31 | Е69-87 | Կերամիկական լվացարանի տեղադրում ոտնակով | հատ | 2 | 18.356 | 36.712 | |
| 36 | 22-365 | Ձևավոր մասեր Φ110 | հատ | 4 | 0.551 | 2.203 | |
| 37 | 22-365 | Ձևավոր մասեր Φ50 | հատ | 6 | 0.459 | 2.753 | |
| 38 | Е18-762 | Ջրատաքացուցիչի /ԳԵՅԶԵՐ/ տեղադրում | հատ | 1 | 27.534 | 27.534 | |
| 41 | 16-34 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ Φ110x2,8մմ | գմ | 8 | 2.753 | 22.027 | |
| 42 | 16-33 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ Φ50x2,5մմ | գմ | 10 | 1.377 | 13.767 | |
| 43 | Е23-155 | Կոյուղագծի միացում գործող ցանցին | տեղ | 1 | 4.589 | 4.589 | |
| 46 | 26-16 | Խողովակների ջերմամեկուսացում հանքաբամբակով փաթաթվախ ալյումինե ֆոլգաիզոլով δ=40մմ | մ3 | 0.4 | 9.178 | 3.671 | |
| 48 | Е16-135 | Ամերիկանկա d25 | հատ | 5 | 0.459 | 2.294 | |
| | | | | | 0.000 | 244.959 | 3.36 |
| | | ***ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ*** | | | 0.000 | | |
| 1 | Ц8-612-10 q=0,6 | Էլ.լուսավորության վահանի ապամոնտաժում | լր-զմ | 1 | 4.589 | 4.589 | |
| 4 | Ц8-591-8 q=0,6 | Վարդակների և անջատիչների ապամոնտաժում | հատ | 7 | 0.918 | 6.425 | |
| 5 | Ц8-599-5 q=0,6 | Լուսատուի ապամոնտաժում | հատ | 9 | 0.918 | 8.260 | |
| 13 | Ц8-599-1 | Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 36վտ ,20x20սմ չափերի, լամպերով | հատ | 35 | 5.507 | 192.737 | |
| 17 | Ц8-402-2 | Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊՎ-3x6մմ2 փակ էլ.հաղորդման գծերի համար | գմ | 45 | 0.918 | 41.301 | |
| 19 | Ц8-402-2 | Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊՎ-3x2,5մմ2 փակ էլ.հաղորդման գծերի համար | գմ | 220 | 1.239 | 272.585 | |
| 20 | Ц8-591-2 | Անջատիչ մեկստեղանի նորմալ տարբերակի միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220վ, 6Ա | հատ | 8 | 1.836 | 14.685 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Ц8-591-10 | Նույնը երկստեղանի 220Վ, 6Ա | հատ | 2 | 3.671 | 7.342 | |
| 21 | Ц8-591-7 | Երկբևեռ խրոցակային վարդակ 220Վ, 25Ա հողանցման կոնտակտով տուփով | հատ | 68 | 0.918 | 62.410 | |
| 22 | Շուկա | Ճյուղավորման տուփ | հատ | 5 | 0.918 | 4.589 | |
| 26 | 8-525-2 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ, $32^2$ | հատ | 3 | 9.178 | 27.534 | |
| 27 | 8-525-1 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ, $25^2$ | հատ | 2 | 7.342 | 14.685 | |
| 28 | Շուկա | Ճարմանդ | հատ | 4 | 0.918 | 3.671 | |
| | | **Ընդամենը** | | | | 660.811 | 9.06 |
| | | **Ամբողջը** | | | | **7295.000** | **100** |
| | | **ԱՀՀ 20%** | | | | **1459.000** | |
| | | **Ընդամենը** | | | | **8754.000** | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**հեռ. 59-68-57**
**Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru**

**Վ. Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Տարոն-ԳԳ» ՍՊԸ**
**Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,**
**գ. Ն. Բազմաբերդ 15փ, 6շ**
**Հեռ.՝ 093-640-448**
**էլ. փոստ՝ taron.Baghramyan77@mail.ru**
**ԱկբաԿրեդիտԱգրիկոլ Բանկ**
**Հ/հ՝ 220173331251000**
**ՀՎՀՀ 05028219**

**Տնօրեն՝**

**Գ. Գևորգյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

Հավելված 2
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի հուլիսի 18-ի
N 356-Ն հրամանի

«Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 230-Ն հրամանի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 2.1*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը  Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն